

441



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝

Շրջակա միջավայրի նախարար
Հակոբ Սիմիոյան

«20» 01 2025թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱԿԱՅՐԻ ԿՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 007 - 25

Նախաձեռնող՝

«ԴԴ գրուպ» ՍՊԸ
Հաղթանակ 1-ին փողոց, 1-ին նրբանցք 61

Գործունեությունը՝

Աջափնյակ վարչական շրջանի Հաղթանակի 1-ին փողոց,
1-ին նրբանցք 61 հասցեում գտնվող արտադրական
շինության վերակառուցում և ընդլայնում
ք. Երևան

Առդիր՝ 6 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 007 - 25

«20» հունվարի 2025թ.

Աջափնյակ վարչական շրջանի Հաղթանակի 1-ին փողոց, 1-ին նրբանցք 61 հասցեում գտնվող արտադրական շինության վերակառուցման և ընդլայնման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն

Նախաձեռնող՝	«ԴԴ Գրուպ» ՍՊԸ
Ներկայացված նյութեր՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն, նախագծային փաստաթուղթ
Գործունեության տեսակ՝	/Բ կատեգորիա/
Գտնվելու վայրը՝	ք. Երևան, Աջափնյակ վարչական շրջան

Ներածական մաս. Նախատեսվում է իրականացնել Աջափնյակ վարչական շրջանի, Հաղթանակի 1-ին փողոց 1-ին նրբանցք 61 հասցեում գտնվող արտադրական շինության կառուցման աշխատանքներ: Գործունեության նպատակն է հիմնել ժամակակից լուծումներով կարճահատված մակարոնի արտադրություն:

Նախատեսվող գործունեության հողամասի նպատակային նշանակությունը՝ արդյունաբերական, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության, գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ արդյունաբերական օբյեկտների: Գրանցված իրավունքի տեսակը՝ սեփականություն:

Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի (ՀՕ-150-Ն) 12-րդ հոդվածի 4-րդ մասի 8-րդ կետի ա. ենթակետի՝ նախատեսվող գործունեությունը հանդիսանում է Բ կատեգորիայի գործունեության տեսակ:

Նկարագրական մաս. Երևան քաղաքի Աջափնյակ վարչական շրջանի, Հաղթանակի 1-ին փողոց 1-ին նրբանցքի 61 հասցեում արտադրական շինության կառուցման նախագծի մշակման համար հիմք է հանդիսացել անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման հ.02062023-01-0079 վկայականը: Հողամասի ընդհանուր մակերեսը 3,041856 հա է:

Տարածքում առկա են՝ 10194,67 քմ շինություն /կադաստրային ծածկագիր՝ 01-01-0613-0005-001, որը իրենից ներկայացնում է երեք հարկանի /կենտրոնական հատվածը 4 հարկանի/ վարչական մասնաշենք և 1 հարկանի արտադրական մասնաշենք, 65,52 քմ և 620,2 քմ



մակերեսներով շինություններ, /01-01-0613-0005-003, 01-01-0613-0005-004 կադաստրային ծածկագրերով/ ինչպես նաև 1148,58 քմ մակերեսով անավարտ ինքնակամ շինություն:

Նախատեսվում է քանդել գոյություն ունեցող 65,52քմ, 620,2քմ մակերեսներով շինությունները և անավարտ ինքնակամ շինությունը:

Վերակառուցվելու է 10194,67 քմ մակերեսով շինությունը, ամրացվելու է գոյություն ունեցող կրող կոնստրուկցիաները, ապամոնտաժվելու է արտաքին ինքնակրող պատերը՝ վերահատակագծելուն որպես վարչական մասնաշենք:

Նախատեսվում է վերակառուցել նաև 10194,67քմ մակերեսով շինության արտադրական հատվածը /իրականացնել սյուների ամրացման աշխատանքներ, ծածկերի ամրացում /տորերի իրականացում/, հնարավոր է առանձին հատվածներում անտրեսուլային հարկերի իրականացում: Նախատեսվում է իրականացնել արտադրական մասնաշենքին կցակառույց շինություն՝ արտադրական գործառույթի կազմակերպման նպատակով: Կցակառույց շինությունը մեկ, մասամբ երկու հարկանի է: Տարածքի դեպի ճանապարհներ հարող հատվածամասերում նախատեսվում է պահակակետերի կառուցում և մեքենաների լվացման կետ: Արտադրական շինության տանիքը նախատեսված է իրականացնել լանջավոր փոքր թեքությամբ, վարչական մասնաշենքը՝ հարթ /չահագործվող/, կազմակերպված ջրահեռացմամբ: Շինությունը նախատեսվում է երեսապատել սենդվիչ պանելներով, բազալտե և տուֆե սալերով: Նախատեսվող արտադրությունը՝ հացահատիկի մշակում, մակարոնեղենի արտադրումը և փաթեթավորումը:

Տեխնիկատնտեսական ցուցանիշներն են.

- հողի մակերես՝ 30418.56 քմ,
- գոյություն ունեցող կառուցապատված մակերես՝ 9323.29 քմ,
- նախատեսվող կառուցապատում՝ 5545.3 քմ,
- նախատեսվում է պահակակետ և պարիսպ,
- մեքենաների սպասարկման շինություն՝ 730.04 քմ,
- կանաչապատման մակերես՝ 8042.67 քմ,
- մայթ, ճանապարհ, ճեմուղի՝ 6777.26 քմ:

Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է տարածքը կանաչապատել և բարեկարգել: Տարածքում կիրականացվի սիզամարգի ցանքս կտրկվեն ծառեր և թփեր: Կանաչապատ տարածքների ներքին ոռոգման ցանցը նախատեսվում է կաթիլային:

Օբյեկտի ընդհանուր կոմպլեքսի շինարարության նորմատիվ տևողությունը ծրագրվում է 24 ամիս՝ շինարարական աշխատանքների կատարման համար թույլտվության տրամադրման օրվանից:

Շինարարության նյութատեխնիկական մատակարարումը նախատեսվում է շինարարական ինդուստրիայի ձեռնարկություններից և գլխավոր կապալառու կազմակերպության արտադրական բազայից: Շաղախը և բետոնը կառաքվեն Երևան քաղաքի մոտակա բետոնաշաղախային հանգույցներից մասնագիտացված տրանսպորտային միջոցներով:

Շինարարական նյութերից օգտագործվելու է ցեմենտ, մետաղական ամրաններ՝ և այլ կոնստրուկցիաներ, ապակի, փայտ, սրբատաշ և կոպտատաշ քարե շար, երեսպատման նյութեր և այլն: Բնառեսուրսներից օգտագործվելու է միայն ջուր՝ աշխատանքային հարթակի ջրցանի:



հանված գրունտի և ստացվող ավազի ու խճի խոնավացման, ինչպես նաև շինարարական անձնակազմի խմելու և կենցաղային նպատակների համար: Աշխատողների կոմունալ կենցաղային պայմաններն ապահովելու համար տեղադրվելու է բիոզուգարաններ:

Ե/բ հիմքերի տեղադրման համար կատարվելու է մոտ 35000 խմ ընդհանուր ծավալով փորման աշխատանքեր: Հանվող 30000 խմ ծավալով զանգվածը կտեղափոխվի Երևանի քաղաքապետարանի կողմից օրենքով սահմանված կարգով հատկացված վայր, մնացած մասը՝ կարճաժամկետ կապիվի շինարարական հրապարակում և կօգտագործվի որպես հետլիցք:

Ստորգետնյա ավտոկայանատեղիներ ունի երկակի նշանակություն, որն անհրաժեշտության դեպքում կարող է ծառայել որպես պարզագույն թաքստոց: Տվյալ տարածքն ապահովված է օդափոխությամբ և վթարային լուսավորությամբ:

Օդափոխությունն արտադրամասում կատարվելու է տեղային քարշիչ սաքրերի կիրառմամբ և բնական օդափոխությամբ: Նախատեսված է օդափոխության արհեստական համակարգ արտաձուլը կատարվելու է արտաձման համակարգերի միջոցով: Օդահեռացումը կատարվելու է երկու զոնաներից՝ վերևի և ներքևի:

Կենցաղային կեղտաջրերը սանիտարական սարքերից ինքնահոս հավաքվելու և հեռացվելու են ներքին ցանցի միջոցով դեպի կոյուղու բակային ցանց: Կոյուղու բակային ցանցը նախատեսված է միացնել 1 հատ կեղտաջրերի մաքրման կենսաբանական կայանի:

Շինարարական աշխատանքների ընթացքում, առաջացող թափոնատեսակներն են՝ կենցաղային աղբը և 1230 խմ ծավալով շինարարական աղբը (այդ թվում շինությունների քանդումից առաջացող) որն ամբողջությամբ տեղափոխվելու է տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր, իսկ կենցաղային աղբը տեղափոխվելու է աղբահավաք ծառայության կողմից պայմանագրային հիմունքներով:

Շինարարության ընթացքում աղմուկի և թրթռումների մակարդակը կապված է լինելու շինարարական տեխնիկայի, սարքավորումների և տրանսպորտային միջոցների աշխատանքի հետ: Հաշվարկներով հիմնավորվել է, որ աղմուկի և թրթռման մակարդակը գտնվում է նորմայի սահմաններում:

Կոշտ և փափուկ ցորենի սորտերից կարճ մակարոնեղենի արտադրությունն իրականացվում է հաստատված տեխնոլոգիայով: Կոշտ և փափուկ ցորենի սորտերից մակարոնեղենի պատրաստումը ներառում է հետևյալ փուլերը.

- արտադրության համար հումքի պատրաստում,
- խմորի պատրաստում և արտադրանքի ծուլում,
- չորացնող արտադրանք,
- փաթեթավորում և պիտակավորում,
- վերադարձվող թափոնների վերամշակում:

Կոշտ և փափուկ ցորենի տեսակներից մակարոնեղենի արտադրության հոսքագիծը նախատեսում է պարտադիր արտադրական տարածքներ՝ հումքի պատրաստման տարածք, արտադրանքի կաղապարման և չորացման տարածք, փաթեթավորման և վերադարձվող թափոնների վերամշակման տարածք:

Նախնական չորացում. իրականացվելու է մակարոնեղենի մակերևույթին չորացած կեղև ստեղծելու համար, որը կանխում է արտադրանքի կաշումը չորացման գործընթացում, երբ այն գտնվում է չժանգոտվող պողպատից մետաղական ցանցի վրա:



Սառեցման վերջնական փուլն իրականացվում է միաշերտ գոտի սառնարանում: Բնական եղանակով կամ սառը ջրի պարույրներով սառեցված օդը արտադրանքի միջով անցնում է առավելագույն արդյունավետության սկզբունքով՝ ապահովելով մակարոնեղենի հավասարակշռված և արդյունավետ սառեցում, որն այնուհետև առաքվում է պահեստարան օպտիմալ վիճակում՝ պատրաստ փաթեթավորման:

Կարճ կտրվածքով մակարոնեղենի գծի վրա մակարոնեղենի արտադրության ժամանակ առաջանում են թափոններ խմորի հունցման, ձուլման և չորացման տարածքներում, որոնք չունեն աղտոտվածություն, օտար համ և հոտ, ուղարկվում են վերամշակման:

Մակարոնեղենի փաթեթները խմբավորված են բլոկների կամ կույտերի մեջ:

Հաշվետվությունում եղած տեղեկատվության համաձայն՝ նախատեսվող տարածքում Կարմիր գրքերում գրանցված բույսեր և կենդանիներ չկան, բնության հատուկ պահպանվող տարածքներ, բնության հուշարձաններ, ինչպես նաև պատմության, մշակույթի հուշարձաններ որտեղ իրականացվում է վտանգված էկոհամակարգերի պահպանություն չկան:

Շրջակա միջավայրի բաղադրիչների վրա վնասակար ազդեցության մեղմացման/վերացման նպատակով նախատեսվում են հետևյալ բնապահպանական միջոցառումները.

- քանդման և շինարարական աշխատանքների /փոշեգոյացնող աշխատանքներ/ ընթացքում իրականացվելու է ջրցան,
- պարբերաբար ստուգվելու է շինարարական տեխնիկայի և փոխադրամիջոցների տեխնիկական վիճակը և իրականացվելու է կարգադրում,
- շինարարական նյութերի (հատկապես սորուն շինարարական նյութերի դեպքում, ինչպիսիք են ավազը, խիճը, հողը և այլն) տեղափոխումը իրականացվելու է փակ ծածկով մեքենաներով,
- սորուն նյութերի պահեստները ծածկվելու են համապատասխան բարձրությամբ թաղանթով, ինչը կանխարգելում է փոշու տարածումը,
- աշխատանքներն ավարտելուց հետո մաքրվելու են բոլոր տարածքները և առաջացած թափոնները տեղափոխվելու են ինքնակառավարման մարմնի կողմից հատկացված աղբավայր,
- շինարարական աշխատանքները և տրանսպորտի տեղաշարժը կազմակերպվելու է ցերեկային ժամերին,
- շինարարական աշխատանքների ընթացքում ներգրավվելու են ժամանակակից աղմուկի առաջացման ցածր ցուցանիշներ ունեցող տեխնիկական միջոցներ,
- բացառել շինարարության ընթացքում օգտագործվող մեքենաների կայանումը բնակելի տների, այլ հասարակական շենքերի հարևանությամբ,
- օգտագործվող շինտեխնիկական և մեքենաները պետք է ապահովված լինեն համապատասխան խլացուցիչներով,

Արտադրամասի շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում նախատեսվում է իրականացնել շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելման/մեղմացմանն ուղղված հետևյալ մշտադիտարկումները.

-Մթնոլորտային օդ կատարվող աղտոտող նյութերի (փոշի, CO, NOx) արտանետումների որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ՝ ամսական մեկ անգամ:



- Փոշենստեցման նպատակով նախատեսվում է իրականացնել տարածքի ջրցանում տարվա շոգ և չոր եղանակներին՝ օրական 2-3 անգամ:

- Օգտագործված մեքենայական յուղերով ու քսայուղերով հողերի հնարավոր աղտոտումից խուսափելու նպատակով հողերի աղտոտվածության մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ անգամ:

- Աղմուկի և թրթռումների մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ:

- Հարակից տարածքներում կեղսաբազմազանության մոնիթորինգ՝ 3 ամիսը մեկ անգամ:

Բնապահպանական միջոցառումների համար նախատեսվում է ամբողջ շինարարության ընթացքում հատկացնել 1360000 ՀՀ դրամ:

Պատճառաբանական մաս. Օրենսդրությամբ սահմանված կարգով, փորձաքննության ընթացքում, Երևան քաղաքի, Աջափնյակ վարչական շրջանում անցկացված հանրային լսման ընթացքում գործունեության իրականացումը տեղական ինքնակառավարման մարմինների և հանրային լսման մասնակիցների կողմից արժանացել է հավանության:

Հաշվետվության վերաբերյալ փորձաքննական գործընթացում ստացվել են կարծիքներ՝ ներքին գործերի, առողջապահության, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություններից, քաղաքաշինության կոմիտեից, շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումներից, ինչպես նաև Երևանի քաղաքապետարանից:

Ստացված դիտողությունները և առաջարկությունները հաշվի են առնվել հաշվետվության լրամշակված տարբերակում:

Ամփոփելով հաշվետվության բնապահպանական և սոցիալական ազդեցությունների վերլուծությունները՝ կարելի է եզրահանգել, որ շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները, որոնք կառաջանան նախատեսվող գործունեության աշխատանքների իրականացման արդյունքում, կկրեն ժամանակավոր և տեղայնացված բնույթ և կլինեն թույլատրելի նորմերի սահմաններում: Դրանք կարող են բացառվել կամ մեղմվել գործունեության ընթացքում բնապահպանական միջոցառումների արդյունավետ իրականացմամբ:

Փորձաքննական պահանջներ

-Արտադրանքի համար օգտագործվող հումքը պետք է համապատասխանի «Սննդամթերքի անվտանգության մասին» նորմերին, տեխնիկական բնութագրերին, բժշկական և կենսաբանական պահանջներին, ունենա հիգիենայի կամ որակի վկայականներ:

1. Կառուցապատման աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է խստագույնս հետևել ՇՄԱԳ հաշվետվությունում ներառված բնապահպանական պահանջների և միջոցառումների իրականացմանը, իսկ դրանց չբավարարման դեպքում ներառել լրացուցիչ միջոցառումներ՝ բնապահպանական նորմերը պահպանելու նպատակով:

2. Նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, պահպանել արտակարգ իրավիճակների և աշխատանքի անվտանգության կանոններն ու նորմերը:



4. Բետոնի տեղափոխումն իրականացնել ՇՄԱԳ հաշվետվությունում նախատեսված ձևով՝ բացառելով շինարարական հրապարակում կամ հարակից տարածքներում բետոնի արտադրությունը:
5. Շինարարական աշխատանքների ընթացքում առաջացող թափոնների կուտակումն ու հեռացումն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ Երևանի քաղաքապետարանի հետ համաձայնեցված:
6. Շինհրապարակից դուրս եկող մեքենաների անվադողերը լվանալ, իսկ առաջացած կեղտաջուրը հեռացնել՝ միացնելով ջրահեռացման համակարգին:
7. Կառուցապատման աշխատանքների ժամանակ, օրենսդրությամբ սահմանված կարգով, չափումների միջոցով պահպանել արտանետվող փոշու և առաջացող աղմուկի ու թրթռումների թույլատրելի մակարդակը:
8. Պարսպապատել շինարարական հրապարակները իսկ ապամոնտաժվող շենքերն ու շինությունները ծածկել շինարարությանը համապատասխան բարձրության անթափանց թաղանթով:

ԵԶՐԱՓՈՒԿԻՉ ՄԱՍ

«ԴԴ Գրուպ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Աջափնյակ վարչական շրջանի Հաղթանակի 1-ին փողոց, 1-ին նրբանցի 61 հասցեում գտնվող արտադրական շինության վերակառուցման և ընդլայնման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությանը տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն՝

Իսաչիկ Մարտիրոսյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի տեղակալ՝

Հերիքնազ Մկրտչյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի առաջատար մասնագետ՝

Գոհար Մինասյան